ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1961 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 40-ԱՄՅԱԿԻՆ

Բերկրալից օրեր ապրեցին Հայաստանի և Վրաստանի աշխատավորները այս տարվա մայիսի առաջին կեսերին։ Երկու ռեսպուբլիկայում էլ Մայիսմեկյան տոնակատարությանը հաջորդեցին հայ և վրաց ժողովուրդների ազգային վերածնդի մեծ տոնի՝ Սովետական իշխանության հաստատման և Կոմունիստական պարտիաների կազմավորման 40-ամյա հոբելյանները։ Սրանց հետ միասին այդ նշանավոր հոբելյանների տոնակատարությանը ջերմ մասնակցություն ունեցան սովետական բազմազգ Միության մյուս ժողովուրդները՝ որպես միասնական մեծ ընտանիքի հարազատ անդամներ։

Վրաստանում սովետական կարգերի հաստատման և Վրաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյա հոբելյանը անսահման ջերմությամբ նշեց հայ ժողովուրդը։ Վրաց ժողովրդի ազգային այդ մեծ տոնին էր նվիրված նաև գիտական այն սեսիան, որ տեղի ունեցավ մայիսի 16-ին մեր ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում։

Սեսիան բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Իր հակիրճ ելույթում նա համառոտակի բնորոշեց այն մեծ ուղին, որ անցել է վրաց ժողովուրդը անցած 40 տարում, Սովետական Միության մյուս ժողովուրդների եղբայրական ընտանիքում։

Փառավոր ուղի է անցել վրաց ժողովուրդը Սովետական իշխանության տարիներին, և դրանով հպարտանում է ոչ միայն ինքը, վրաց ժողովուրդը, այլև մեր Միության մյուս ժողովուրդները,— ասաց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։— Վրաստանը այսօր դարձել է բարձր զարգացած արդյունաբերության և գյուղատնտեսության ռեսպուբլիկա և իր արժանի ավանդն է ներդնում մեր ընդհանուր գործում՝ կոմունիզմի կառուցման մեջ։ Մենք, հայ գիտնականներս,— շարունակեց իր խոսքը Համբարձումյանը,— շատ ենք հետաքրքրվում մեր վրացի գիտնականների հաջողություններով և շարունակ համագործակցում ենք նրանց հետ։ Այդ համագործակցությունը օրավուր ավելի սերտ է դառնում և լայն ծավալ ընդգրկում։

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը «Վրաստանում սովետական կարգերի հաստատման 40 տարին» թեմայով զեկուցման համար խոսք է տալիս Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Մելիքիշվիլուն, որին ներկաները դիմավորում են ծափահարություններով։

Իր բովանդակալի զեկուցման մեջ ակադեմիկոս Գ. Ա. Մելիքիշվիլին տալիս է նկարագիրը այն հսկայական հաջողությունների, որոնք ձեռք են բերել Վրաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ՝ տնտեսության և կուլտուրայի զարգացման ասպարեզում, անցած չորս տասնամյակներին։

Եվ հիրավի, մեծ են այդ հաջողությունները։ Ինչպես սովետական մյուս ռեսպուբլիկաների, այնպես էլ Վրաստանի համար անցած 40-ամյա ժամանակաշրջանը բնորոշվում է տնտեսության ու կուլտուրայի ծաղկմամբ, սոցիալիստական մեծ վերափոխումներով։ Այդ տարիները Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների հետևողական կենսագործման ու դրանց հաղթանակի տարիներ էին, վիթխարածավալ հաջողությունների տարիներ։ Այդ են վկայում այն փաստերն ու թվերը, որ բերեց ակադեմիկոս Մելիքիշվիլին իր զեկուցման մեջ։ Այսպես, 1960 թվականին արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը, 1913 թվականի համեմատությամբ, աճեց 40 անգամ, այդ թվում խոշոր արդյունաբերու-

թյան արտադրանքը՝ 112 անգամ։ Վրաստանն այժմ 41 անգամ ավելի քարածուխ է արդյունահանում և 190 անգամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրում, քան 1913 թվականին։ Ռեսպուբլիկայում բնակչության ամեն մի շնչին 3 անգամ ավելի էլեկտրաէներգիա է ընկնում, քան հարևան Թուրքիայում։ Վրաստանը դարձել է բազմաճյուղ արդյունաբերական ռեսպուբլիկա։ Արդյունաբերության առաջատար ճյուղերից են էլեկտրաէներգետիկականը, քարածուխինը, մետալուրգիականը, հաստոցաշինականը, մեքենաշինականը, քիմիականը, էլեկտրատեխնիկականը, գործիքաշինականը, սննդինը և այլն։

Նշանակալի են հաջողությունները գյուղատնտեսության ասպարեզում։ Թեյի պլանտացիաները ռեսպուբլիկայում այժմ զբաղեցնում են 60 հազար հեկտար տարածություն՝ 1921 թվականի ընդամենը 1000 հեկտարի փոխարեն, իսկ տեսակավորված թեյատերևի արտադրությունը նույն ժամանակամիջոցում ավելացել է 285 անգամ։ Յոթնամյակի վերջին ռեսպուբլիկան կարտադրի 200 հազար տոննա թեյատերև։ Լուրջ բեկում ապրեց Վրաստանի գյուղատնտեսությունը 1953 թվականի սեպտեմբերյան պլենումից հետո։ Վերջին յոթ տարիներին (1953—1960), նախորդ յոթնամյակի համեմատությամբ, Վրաստանը պետությանը ավելի վաճառել է 347 հազար տոննա թեյատերև, 408 հազար տոննա խաղող, 134 հազար տոննա միս և 301 հազար տոննա կաթ։

Կուլտուրական մեծ վերափոխումներ է ապրել վրաց ժողովուրդը Սովետական իշխանության տարիներին։ Ռեսպուբլիկան այժմ ծածկված է դպրոցների, ինստիտուտների և կուլտուր-լուսավորական հիմնարկների խիտ ցանցով։ Բնակչության յուրաքանչյուր հազար շնչին ընկնող աշակերտների քանակով Վրաստանը առաջ է անցել կապիտալիստական բոլոր երկրներից. ռեսպուբլիկայում բնակչության ամեն մի հազար շնչին 3 անգամ ավելի ուսանող է ընկնում, քան Ֆրանսիայում, 3,6 անգամ ավելի, քան Իտալիայում, 8 անգամ ավելի, քան Թուրքիայում և 18 անգամ ավելի, քան Իրանում։ Ռեսպուբլիկայի մտավորականության շարքերում հաշվվում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ ավելի քան 300 հազար մասնագետներ։ Ռեսպուբլիկայի գիտական մտքի խոշոր կենտրոնն է Գիտությունների ակադեմիան։ Վրաստանում գործում են մոտ 175 գիտահետազոտական ինստիտուտներ, ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոներ, լաբորատորիաներ և գիտական այլ հիմնարկներ։

Գիտական սեսիայի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին պատմական գիտությունների դոկտոր Գ. Ղարիբջանյանի զեկուցումը Վ. Ի. Լենինը և Սովետական իշխանության ամրապնդումն Անդրկովկասում» թեմայով։ Ուշագրավ մի շարք փաստերի մեջբերմամբ նա նշեց այն վիթխարի դերը, որ ունեցել են ռևոլյուցիայի առաջնորդի ղեկավարությունն ու նրա անմիջական ցուցումները անդրկովկասյան երիտ ռեսպուբլիկաներում Սովետական իշխանության ամրապնդման, և նրանց տնտեսության ու կուլտուրայի զարգացման ասպարեզում։

Հետաքրքիր ու բովանդակալի էր Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Տ. Երեմյանի զեկուցումը, որը նվիրված էր պատմագրության զարգացմանը Սովետական Վրաստանում։ Նշելով այն նախադրյալները, որ ունեցել է վրացական պատմագրությունը անցյալում, զեկուցողը այնուհետև պատմում է գիտության այդ ճյուղի հսկայաքայլ առաջընթացի մասին վերջին չորս տասնամյակներում։ Այդ առաջընթացը նախ և առաջ արդյունք է այն նպաստավոր պայմանների, որ գիտության զարգացման համար ստեղծեց Սովետական իշխանությունը։ Վրացական պատմագրության զարգացումը սերտորեն կապելով ակադեմիկոս Ջավախիշվիլու անվան հետ, Ս. Երեմյանը նշում է այն պրոբլեմները, որոնց վրա աշխատել են վրացի պատմաբանները անցած քառասուն տարիների ընթացքում։ Այդ պրոբլեմներից են վրաց ժողովրդի ծագումը, խեթերը և Ուրարտուն, անտիկ ժամանակաշրջանի Վրաստանը, վրացական միջնադարը, Վրաստանի պետականության, իրավունքի և տնտեսական պատմությունը, Վրաստանի քաղաքական և կուլտուրական կապերը Ռուսաստանի հետ և այլն։ Այս պրոբլեմների և սրանց հետ կապված բազմաթիվ հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են նշանավոր վրացի գիտնականներ Ի. Ա. Ջավախիշվիլին, Ս. Ն. Ջանաշիան, Գ. Ա. Մելիքիշվիլին, Մ. Թերձենիշվիլին և ուրիշներ, որոնք վրացագիտությունը հարստացրել են արժեքավոր շատ աշխատություններով։

Սեսիայում լսվեց նաև բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Գ. Արեշյանի ուշադրության զեկուցումը, «Պատմական վեպի փոխադարձ կապի պրոբլեմը ժամանակակից հայկական և վրացական գրականության մեջ» թեմայի շուրջը։

Վրաց ժողովրդի 40-ամյա մեծ տոնին նվիրված այս սեսիան, որն անցավ գիտական բարձր մակարդակով, մի անգամ ևս վկայեց եղբայրական այն սերտ կապերի ու բարեկամության մասին, որոնք իրենց սկիզբն առնում են դարերի խորքից։

Վ. Մ.